ՀԵՍՈՒՐԱՆԱԳՈՒՆՆԵՐ

Տ. ԵՂԻՇԵ ԱՎ. ՔՀՆ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԻՆԱՍ ՍԱՐԳՍԻ ՄԻՆԱՍՅԱՆ

ՎԵՐԱԲԱՑՎԱԾ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՎԵՐԱՏԵՍՈՒՉԸ (1945-1955)

Երջանկահիշատակ Գեորգ Ջ. Մեծագործ Կաթողիկոսը երկարատեւ անգիջում ու հեփեւողական պայքարով հաջողեց ոչ միայն կասեցնել համայնավարական եկեղեցաքանդ գործունեությունը, այլեւ իմաստուն, հավասարակշռված եւ նուրբ դիվանագիտությամբ, ազգային-եկեղեցական գործնական քաղաքականությամբ հնարավոր դարձրեց փոխելու վտանգավոր եւ կործանարար մտածելակերպը: Այդ հզոր անհատականությունն իր վիթխարի հեղինակությամբ եւ տաղանդով, տառապանքի եւ պայքարի երկար ճանապարհ անցնելուց հետո, կարողացավ այդ օրերի պետական այրերին հասկացնել, որ իզուր են այն ճիգերը՝ հնարավոր եւ անհնար միջոցներով դանդաղեցնելու եւ, եթե հնարավոր է, մերժելու Գեորգյան հոգեւոր ճեմարանի վերաբացման խնդիրը: «Ս. Էջմիածնի բարձրագույն հոգեւոր ճեմարանն անհրաժեշտ հաստատություն է, - գրում էր Ամենայն Հայոց Հայրապետության ամենապատիվ Տ. տեղակալը, - Հայ ժողովրդի հոգեւոր-կուլտուրական պահանջներին բավարարելու համար եւ որոշ տեսակետով՝ նաեւ Հայրենի պետությանը օգտակար լինելու: Ս. Էջմիածինը, որպես գլուխ Հայ Եկեղեցու, անցյալում ղեկավարել է ինչպես հայ ժողովրդի կրոնական, նույնպես եւ նրա կուլտուրական կյանքը... Եւ այս բոլորը արել է նա վանական գիտական դպրոցներում դաստիարակված Եկեղեցուն, ազգին եւ Հայրենիքին նվիրված անձերի եւ գիտնական հոգեւորականության շնորհիվ»[1]:

Հակառակ իր կատարած տիտանական աշխատանքին՝ Հայրապետական Աթոռի ազգընտիր տեղապահ Գեորգ արքեպս. Չորեքչյանը, նույնիսկ ի տես իշխանությունների անտարբեր եւ սառը վերաբերմունքին, այնուամենայնիվ դրական, բայց զգուշավոր լավատեսություն ուներ Հոգեւոր ճեմարանի վերաբացման հարցում: Իրեն յուրահատուկ համարձակությամբ ամեն հարմար առիթի հասկացնում էր պատկան մարմիններին, որ այս անգամ չպետք է կրկնվի 1926 թվականի իշխանությունների՝ Գեորգ Ե. Կաթողիկոսին տրված՝ ճեմարանի վերաբացման խոստումը, որն այդպես էլ չկատարվեց:

1 Տե՛ս «Էջմիածին», 2006, մայիս, էջ 92:

Հակառակ Գեւորգ արքեպ. Չորեքչյանի զգուշավոր լավատեսությանը՝ նա իր արդար պայքարը երբեք չդադարեցրեց: Անգիջում եւ հետեւողական աշխատանքով նրան հաջողվեց քայլ առ քայլ հաղթահարել պետական անհաղթահարելի արհեստական պատնեշը եւ ճեմարանի վերաբացման գործում հասնել ցանկալի արդյունքի: Տեղապահ սրբազանին հաջողվեց 1945 թ. հունիսի 16-22 ընկած ժամանակաշրջանում հրավիրել ազգային-եկեղեցական ժողով, որի աշխատանքներին իրենց մասնակցությունն էին ապահովել Կիլիկիո կաթողիկոսությունը, Երուսաղեմի եւ Կ. Պոլսի պատրիարքությունները հոգեւոր առաջին դեմքերով: Ժողովին ներկա էին նաեւ արտաքին ու ներքին թեմերի հոգեւոր եւ աշխարհիկ պատգամավորները: Նրանց թվում էր նաեւ Մինաս Սարգսի Մինասյանը:

Կաթողիկոսական ընտրությունից անմիջապես հետո ազգային-եկեղեցական ժողովի կողմից ակադեմիկոսներ՝ Ավետիք Իսահակյանի, Ստ. Մալխասյանի, բազմամյա մանկավարժ, գրականագետ, ազգագրագետ Երվանդ Ծահազիզի եւ Ստեփան Կամսարականի հետ Մինաս Մինասյանը նույնպես ընտրվում է Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ:

Հոգեւոր ճեմարանի վերաբացման նախօրեին Գեւորգ Զ. Հայրապետին են ներկայացնում ուսումնական հաստատության վերատեսչի պաշտոնի համար մի քանի թեկնածություն: Հայրապետը նախընտրությունը տալիս է բազմամյա մանկավարժական ուղղի անցած Մինաս Սարգսի Մինասյանին:

1945 թ. սեպտեմբերի 5-ին Գերագույն հոգեւոր խորհրդի կողմից Մ. Մինասյանին տրվում է պաշտոնական տեղեկանք, ըստ որի նա նշանակվում է Ս. Էջմիածնում վերաբացվելիք Հոգեւոր ճեմարանի վերատեսուչ. «Տրվում է սույնը Մինաս Սարգսի Մինասյանին, առ այն, որ նա 1945-1946 թթ. հրավիրված է Ս. Էջմիածնի Հոգեւոր ճեմարան՝ ռեկտորի պաշտոնով, որը ստորագրությամբ եւ կնիքի դրոշմամբ վավերացնում է»:

Գեր. Հոգ. Խորհրդի
ժամանակավոր նախագահ
անդամ քարտուղար
5 սեպտեմբերի 1945 թ.[2]

Ո՞վ էր Մինաս Սարգսի Մինասյանը, որ միանգամից արժանացավ Հայոց Հայրապետի բարձր ուշադրությանը եւ գլխավորեց նորաբաց Հոգեւոր ճեմարանը որպես վերատեսուչ եւ անգլերեն լեզվի դասախոս:

Մինաս Սարգսի Մինասյանը ծնվել է Արեւմտյան Հայաստանի Սեբաստիա (Սըվազ) վիլայեթի Կյուրին գավառի համանուն քաղաքում 1892 թվականին, մտավորական Սարգիս Մինասյանի ընտանիքում: Այս փոքրիկ քաղաքը մեր ժողովրդին ու մշակույթին տվել է մի շարք անվանի մտավորականներ՝ Վահե-Վահյան (անվանի բանաստեղծ, մանկավարժ, հասարակական գործիչ), Անդրանիկ Ծառուկյան (բանաստեղծ, իմբազիր, հասարակական գործիչ),Շահե Տատուրյան (հրապարակագիր, հասարակական գործիչ):

Մ. Ս. Մինասյանն իր նախնական կրթությունն ստացել է հայրենի քաղաքի վարժարանում, որի դասընթացը ավարտելուց հետո մտնում է Մարզվանի ամերիկյան

քոլեջ, ուր հնարավորություն է ստանում խորացնելու անգլերեն լեզվի իմացությունը՝ հասցնելով այն ավելի բարձր մակարդակի:

2 Տես ՀՀԱ արխիվ, ֆ. 409, ց. 1, գ. 2311:

Հետագայում ուսումնատենչ երիտասարդն ընդունվում է Կ.Պոլսի համալսարանի իրավաբանական ֆակուլտետ եւ բարձր նիշերով ավարտելով բարձրագույն մասնագիտական կրթությունը՝ ստանում է իրավաբանի վկայական եւ որակավորում ու նվիրվում մանկավարժական գործունեության: Ծնողների առաջարկով Մինասյանը ամուսնանում է ուրֆայաբնակ օրիորդ Մարի Մեծատուրյանի հետ, որը զարմիկն էր վաղամեռիկ բանաստեղծ Միսաք Մեծարենցի: Կազմելով բարեհաջող ընտանիք՝ Մինասյանը ունեցավ չորս զավակներ: Ավագ դուստրը՝ Արմինեն, գյուղատնտես էր: Կրտսեր դուստրը՝ Արփիկը, բանասիրական գիտությունների թեկնածու, որը Երեւանի պետական համալսարանի արեւելագիտության ֆակուլտետում դասավանդում էր պարսկերեն եւ թուրքերեն, ինչպես նաեւ պատկան ժողովուրդների գրականություն: Ավագ որդին՝ Արմենը, բժշկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր էր, իսկ կրտսեր որդին՝ Սարիկը, ինժեներ: Մինասյանների ընտանիքը հրաշքով ազատվեց 1915 թ. յաթաղանից. ընտանիքով նրանք հաստատվում են Հալեպում եւ մնում մինչեւ 1923 թվականը:

1923 թ. Մինասյանն ընտանիքով տեղափոխվում է Կովկաս. սկզբում հաստատվում է Թիֆլիսում, իսկ երեք տարի հետո՝ 1926 թվականին, վերջնականապես տեղափոխվում Երեւան: Այստեղ նա աշխատանքի է անցնում «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագրությունում՝ զուգահեռաբար դասավանդելով նաեւ Երեւանի բանֆակում: Ունենալով իրավաբանի բարձր որակավորում՝ Մինասյանն աշխատել է նաեւ որպես ժողովրդական դատավոր: Նման ազնվագույն մարդու համար այդ ժամանակներում շատ ծանր եւ դժվար էր ծառայել այսպես կոչված արդարադատության բնագավառում: Մինասյանը թողնում է դատավորական ծառայությունը եւ կրկին վերադառնում է մանկավարժական աշխատանքի[3]:

Երեսուն տարի Մինաս Մինասյանը Երեւանի պետական համալսարանում դասավանդել է անգլերեն եւ թուրքերեն:

Աշխատել է Խաչատուր Աբովյանի անվան Հայկական մանկավարժական, ինչպես նաեւ Հայաստանի Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում[4]:

Մինաս Մինասյանը մեծ աշխատանք է կատարել նաեւ թարգմանության բնագավառում: Չափից ավելի ծանրաբեռնված լինելով հանդերձ՝ նա մանկավարժական աշխատանքին զուգընթաց կատարել է հասարակական աշխատանք եւս: Եղել է Կյուրինի Հայրենակցական միության խորհրդի անդամ:

1945 թ. սեպտեմբերի 5-ի Գերագույն հոգեւոր խորհրդի հրամանագրով Մ. Մինասյանը գիտական, մանկավարժական եւ աշխատանքային հարուստ փորձով ստանձնել է Մայր Աթոռի նորաբաց Հոգեւոր ճեմարանի վերատեսչի պատասխանատու պաշտոնը: Նա պիտի կազմակերպեր Հոգեւոր ճեմարանը՝ որպես բացառիկ հոգեւոր ուսումնական հաստատություն, որը կոչված էր դառնալու իրավահաջորդը Գեւորգյան ճեմարանի, որը փակվել էր դեռեւս 1917 թվականին: Պետք է նշել, որ նորաբաց Հոգեւոր ճեմարանի ուսումնական ծրագրերը գրվել էին քսանհինգամյա մանկավարժական հարուստ փորձ ունե-

3 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 656, ց. 1, գ. 29 (այստեղ պահվում են Մ. Մինասյանի հոդվածները, հուշերը, թարգմանությունները, նամակները եւ այլն):

4 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2308:

ցող Գեւորգ Զ. Հայրապետի կողմից: Ծրագրի հիմքում դրված էին երկու գերնպատակային հատկանիշներ՝ եկեղեցասիրություն եւ հայրենասիրություն: Նորաբաց Հոգեւոր ճեմարանի ուսումնական ծրագրերում այդ մասին գրելու համար մեծանուն Հայրապետը հաշվի էր առել նաեւ նախկին ճեմարանի ուսումնական ծրագրերը եւ, իհարկե, ազգային, Հայ Եկեղեցու պատմության դասագրքերը:

Նորաբաց Հոգեւոր ճեմարանը լավագույն, գիտական բարձր որակ ունեցող դասախոսներով ապահովելու համար Գեւորգ Վեհափառը հանձնարարում է նորանշանակ տեսուչ Մինասյանին շուտափույթ բանակցել հանրապետության լավագույն դասախոսների հետ՝ նախընտրությունը, բնականաբար, տալով նախկին ճեմարանականներին:

Մինաս Մինասյանը, օգտագործելով իր ծանոթությունների լայն շրջանակը եւ հեղինակությունը, շուրջ մեկ ամիս բանակցում էր Ստեփան Մալխասյանի, Հրաչյա Աճառյանի, Հովսեփ Գրիգորյանի, Կարո Մելիք-Օհանջանյանի, Բենիամին Հարությունյանի, Վարդան Փոթեյանի, Աշոտ Աբրահամյանի, աշխարհագրագետ Հովհաննես Ստեփանյանի, Առաքել Առաքելյանի, Հ. Պետրոսյանի, Լ. Բեկտաբեկյանի, Մուշեղ Աղայանի, Դանիել Ղազարյանի եւ այլոց հետ:

Դասկածից վեր է, որ նշված անվանի դասախոսները հաճույքով կգային ճեմարանում աշխատելու, բայց նրանցից շատերը, որ անցել էին խորհրդային բանտերով եւ սիբիրյան աքսորավայրերով, զգուշանում էին հրավերն ընդունել: Նշված դասախոսների հիմանական մասի հրաժարումը չխանգարեց Հոգեւոր ճեմարանի բացմանը: Մինաս Մինասյանն ստիպված եղավ նրանց փոխարեն հրավիրել նոր դասախոսների, որոնք, ճեմարան գալով, աշխատում էին հարմարվել տեսչության պահանջներին: Եթե հրավիրված դասախոսների մեջ ճեմարանական ավանդությունների պակաս կար, բարեբախտաբար նրանք ունեին եւ գիտելիք, եւ մակավարժական հմտություն: Ուսանողների համար նկատելի էր, որ նոր ընդունված դասախոսներին Մինասյանը տեսչական իրավունքով պահում էր հսկողության տակ (դասալսումների եւ անձնական զրույցների միջոցով), մինչեւ համոզվում էր, որ տվյալ դասախոսը բոլոր չափանիշներով համապատասխանում էր ճեմարանի պահանջներին:

Հոգեւոր ճեմարանի պաշտոնական բացումը տեղի ունեցավ 1945 թ. նոյեմբերի 1-ին: Այս թվականը մտավ մեր պատմության մեջ որպես Ս. Էջմիածնի հոգեւոր ճեմարանի վերաբացման եւ Մինաս Մինասյանի՝ ճեմարանի առաջին վերատեսուչ նշանակվելու օր:

Այսօր, երբ ես փորձում եմ Հոգեւոր ճեմարանի վերաբացումը մի քանի տողով հիշատակել, հուզմունքից ձեռքս դողում է: Հիշում եմ լուսավոր եւ պատմական 1945 թվականի նոյեմբերի 1-ը, երբ մի խումբ վեղարավորների եւ Հայոց մի քանի մեծերի՝ Ավետիք Իսահակյանի, Ստեփանոս Մալխասյանի, Դերենիկ Դեմիրճյանի, Երվանդ Շահազիզի եւ վերատեսչի՝ Մինաս Մինասյանի ուղեկցությամբ դահլիճ մտավ յոթանասունյոթամյա ծերունազարդ իմաստուն Հայոց Գեւորգ Զ. Հայրապետը: Սկսվեց նորաբաց Հոգեւոր ճեմարանի առաջին ուսանողների, ներկա դասախոսների եւ տեսչական կազմի օրհնության արարողությունը. «Օրհնեսցի, Սրբեսցի նորաբաց հոգեւոր ճեմարանս, ուսանողութիւնս եւ տեսչական կազմս...», հուզված եւ մի քիչ քաշված ձայնով երգում էր ծերունազարդ Վեհափառը: Նրա աչքերից ուրախության արտասուք էր հոսում. ներկաները նույնպես հուզված էին: Ներկա աշխարհականները, որոնք նույնպես նախկին ճեմարանականներ էին,

աղոթքի պահին վստահաբար ունեին ներքին հպարտություն, քանզի ավարտվում էին մեր Եկեղեցու համար մղձավանջային տասնամյակները: Հոգեւոր ճեմարանի վերաբացումով բացվում էին հույսի դռները՝ հնարավորություն տալով Մայր Աթոռին լրացնելու եկեղեցական պաշտոնյաների հսկայական այն բացը, որ ստեղծվել էր անհավատության տասնամյակներում:

Հոգեւոր ճեմարանի վերաբացման առաջին օրից (1945 թ. նոյեմբերի 1-ը) վերատեսուչ Մ. Մինասյանի գբաղվածությունը չափից ավելի շատ էր: Ուսանողներիս համար անսովոր եւ դժվար էր հարմարվել գիշերօթիկ ճեմարանի պայմաններին:

Ծուրջ մեկ ամիս վերատեսուչ Մ. Մինասյանը արթնանում էր մեզ հետ՝ ժամը 06:30-ին եւ մեզ հետ էր մինչեւ 22:00՝ հավաքական աղոթքի ավարտը, որից հետո գնում էինք քնելու: Մինասյանը հսկայական կազմակերպչական անելիքներ ուներ, որոնք շուտափույթ լուծումներ էին պահանջում: Դասախոսների պակասություն կար, նրանց դեռ պետք էր հրավիրել: Ճեմարանի գործող ուսումնական մասնաշենքը նախկին մատենադարանի շենքն էր, որն անհամապատասխան էր ուսումնական կարիքների համար: Նախկին Սինոդի շենքը տրված էր ճեմարանին՝ որպես ննջարանի մասնաշենք, բայց այն չէր գործում, որովհետեւ նորոգման կարիք ուներ: Ճեմարանը չուներ իր խոհանոցը: Մեր ճաշերը պատրաստում էին Վեհարանի խոհանոցում եւ կաթսաները Մայր Տաճարի բակով հասցնում էին Մատենադարանի (ճեմարանի) շենքը: Այս բոլոր խնդիրները լուծելու համար Մինասյանը հսկայական ջանքեր էր ներդնում՝ առանց մազաչափ անգամ վնասելու ուսումնական գործը[5]:

Ավարտվեց առաջին (1945-1946) ուսումնական դժվար տարին: Ամավերջին քննություններից առաջ իմացանք, որ Վեհափառը ներկա պիտի լինի քննություններին:

Մինասյանը հոգեբանորեն մեզ փորձեց նախապատրաստել՝ վստահեցնելով, որ Վեհափառի ներկայությունը քննություններին ավելի պարտավորեցնող է: Եթե մենք լավ նախապատրաստվենք, ապա ոչ մի վախենալու խնդիր չենք ունենա: Իրապես, այդպես էլ եղավ: Նորին Սրբության ներկայությամբ քննություններն անցնում էին բարձր մակարդակով:

Երրորդ ուսումնական տարվա ընթացքում ավելացան նաեւ արտադասարանային պարապմունքները: Ուսանողների մեջ ինքնուրույն մտածողություն եւ աշխատանքի նկատմամբ սեր արթնացնելու, ինչպես նաեւ ունակություններ պատվաստելու նպատակով Մ. Մինասյանի գլխավորությամբ, դասախոսների գործուն մասնակցությամբ ճեմարանում կազմակերպվում էին գրական-գեղարվեստական երեկոներ, որոնք նվիրված էին լինում ազգային-եկեղեցական տոներին եւ մշակույթի ճանաչված դեմքերին: Նման երեկոների ողջ ծանրությունը հիմնականում մնում էր ճեմարանի ուսանողության վրա: Ավելի ուշ իմացանք, որ Վեհափառ Հայրապետի ցանկությունն է եղել, որ նման հարցերում ճեմարանականներին ավելի ծանրաբեռնեն:

Հակառակ արտաքին, համայնավարական բոլոր տեսակի ճնշումներին» առաջին սերնդի ինը շրջանավարտներից ութը՝ դաստիարակված քրիստոնեական վեհ գաղափարներով, հարենասիրությամբ եւ եկեղեցասիրությամբ, 1951 թ. մտան հոգեւոր ասպարեզ,

5 Մանրամասն տե՛ս ՀԱԱ ֆ. 823, գ. 8, էջ 7 (Մ. Մինասյանի գրավոր զեկուցումը՝ գրված 1946 թ. հունվարի 28-ին):

անսահման ութախություն պատճառելով Գեորգ Զ. Հայրապետին, մեր առաջին ուսուցչապետ սիրելի Մինաս Մինասյանին եւ, իհարկե, հավատացյալ ժողովրդին: Սարկավագական ձեռնադրությունից հետո օրավուր ավելանում էր եկեղեցի այցելողների թիվը: Նրանցից մի մասին խորը հավատքն էր բերում, ովքեր սարկավագական ձեռնադրության խորհրդի մեջ տեսնում էին Ս. Էջմիածնի եւ Հայ Եկեղեցու զարթոնքի սկիզբը: Մյուս մասին հետաքրքրությունն էր բերում Ս. Էջմիածին՝ տեսնելու եւ զարմանալու եկեղեցական հագուստով «հետամնաց» երիտասարդներին՝ սարկավագներին: Այսուամենայնիվ չեմ կարող ասել, թե ինչու խորհրդահայ իշխանավորները այդ օրերին հապշտապ Էջմիածինը դարձրին փակ քաղաք: Առանց անցաթղթի Երեւանի բնակիչը չէր կարող այցելել Էջմիածին[6]:

Մայր Աթոռը բողոքով արձագանքեց, եւ արգելքը շուտով վերացրին:

1951 թվականը նշանավոր էր Մինաս Մինասյանի համար նաեւ, որ իր յոթամյա տեսչական եւ մանկավարժական աշխատանքի արդյունքում իր շրջանավարտ ինը սաները պաշտպանեցին իրենց ավարտաճառերը: Վեհափառ Հայրապետի հանձնարարությամբ մեր ընդդիմախոսները դարձան եպիսկոպոսական ձեռնադրության առթիվ այդ օրերին Մայր Աթոռում գտնվող Եղիշե եպիսկոպոս Տերտերյանը (պատրիարք Ս. Երուսաղեմի), Վազգեն եպիսկոպոս Պալճյանը (ապագա Կաթողիկոս Ամենայն Հայոց), Նորայր եպիսկոպոս Պողարյանը (նշանավոր ձեռագրագետ եւ գիտնական):

Պաշտպանությունն անցավ շատ բարձր մակարդակով, գնահատականները՝ գերազանց եւ լավ: Հոգեւոր ճեմարանի յոթամյա պատմության էջը փակելուց առաջ, կարող եմ հաստատել, որ մեր վերատեսուչ Մ. Մինասյանը գտնվում էր գերերջանիկ վիճակում, քանզի վերաբացված ճեմարանի առաջին սերնդի ութ սաները, ինչպես ասացի, 1951 թվականին ուսանողական համազգեստը փոխարինեցին եկեղեցական զգեստով՝ համալրելու Մայր Աթոռի միաբանական նոսրացած շարքերը:

1951 թ. լրանում էր նաեւ «Սրբոց Վարդանանց զորավարացն...» հերոսամարտի 1500-ամյակը: Վեհափառ Հայրապետի կողմից տարին հայտարարվեց հոբելյանական: Տոնակատարությունը բարձր մակարդակով անցկացնելու մտահոգությամբ Մ. Մինասյանը խնդրում է Գեորգ Վեհափառին, որ ազգային այդ մեծ տոնի ուսանելի դասերը գիտական մակարդակով պատշաճ վերլուծելու եւ ներկայացնելու համար մեկ-երկու ճանաչված մասնագետներ հրավիրեն: Նորին Սրբությունը մերժում է՝ պատճառաբանելով, որ տոնակատարության ողջ կազմակերպչական աշխատանքները այս անգամ հարկավոր է հանձնարարել ճեմարանի առաջին շրջանավարտ սարկավագներին, որոնց նկատմամբ ինքը (Վեհափառը) ուներ կատարյալ վստահություն: Մեծանուն Հայրապետը Մ. Մինասյանին տեղեկացնում է նաեւ, որ ինքը նախապես արդեն սարկավագներին հանձնարարել էր զեկուցման թեմաները: Մ. Մինասյանը մի փոքր մտավախություն ուներ, բայց նկատի ունենալով Վեհափառի վստահ եւ վճռական մոտեցումն այս հարցում՝ ինքը եւս տրամադրվեց լավատեսորեն:

Երեկոն կայացավ, եւ մենք, ներքին մեր ուժերը ի մի բերելով եւ կենտրոնանալով, հան-

6 Տե՛ս «Վավերաթղթեր Հայ Եկեղեցու պատմության», գիրք Զ., Գեորգ Չորեքչյան Կաթողիկոս Ամենայն Հայոց (1938-1955 թթ.), Երեւան, 1999, էջ 510:

դես եկանք մեզ հանձնարարված զեկուցումներով: Տեսնել էր պետք Հայոց Հայրապետի անթաքույց ուրախությունը մեր կարդացած զեկուցումների առթիվ, որոնք, բնականաբար, իրենց որակով ավելի ուսանողական մակարդակի էին:

Այնուամենայնիվ, հանդիսականներն այն ընդունեցին ծափահարություններով ու գնահատեցին՝ որպես նորաբաց հոգեւոր ճեմարանի առաջին շրջանավարտ ուսանողների համեստ «հաղթանակ»:

Ավարտելով Հոգեւոր ճեմարանի լրիվ դասընթացը՝ ծառայության նշանակվեցինք տարբեր տեղերում: Ես ծառայության անցա Հոգեւոր ճեմարանում՝ որպես տեսչի օգնական եւ վերակացու: Պր. Մինասյանը մեզ՝ առաջին շրջանավարտներիս համար ոչ միայն տեսուչ եւ դասախոս էր, այլեւ ծնողի դեր է կատարել ճեմարանական ուսումնառության վեց տարիների ընթացքում: Ինչպես միջնադարյան մեր վանքերում ձեռագիր ընդօրինակող մեր համեստ վանականները, որոնք իրենց գրած հիշատակարաններում անսահման ջերմությամբ հիշում եւ արձանագրում էին երախտագիտությամբ ոչ միայն իրենց մարմնական ծնողներին՝ հորն ու մորը, այլեւ իրենց ուսուցիչներին: Ճիշտ այդ օրինակով Հոգեւոր ճեմարանի վերատեսուչ Մ. Մինասյանը մեզ համար եղավ եւ մնաց մեր հիշողության ու գիտակցության մեջ որպես դաստիարակ եւ ծնող, որին ճեմարանական իմ սերունդը կապված էր որդիական սիրով: Բարեհամբույր եւ մաքուր նկարագիր ուներ նա: Մեր ուսանողական տարիներին եւ նույնիսկ դրանից հետո էլ նրանից սովորում էինք եւ նրա ազդեցության տակ էինք: Մեր ամեն մի սխալ քայլ մեկնաբանում էր եւ ցույց տալիս արարքի բացասական հետեւանքները: Նման դեպքերում մեզ մնում էր միայն որդիաբար խոնարհվել, ընդունել մեր սխալը, ներողություն խնդրել՝ այլեւս նման արարք չկատարելու խոստումով: Որպես տեսուչ եւ դասախոս շատ հետեւողական էր դասախոսների եւ մանավանդ ուսանողների նկատմամբ: Ուսանողական ամենափոքր զանցանքներն անգամ իր կողմից չէին մնում անարձագանք: Այս ամենով հանդերձ՝ անմնացորդ սիրով կապված էինք նրա հետ: Բարեկիրթ էր ու բարձրակարգ մտավորական: Ուներ քրիստոնեական ներողամիտ ոգի: Ուսանողների հետ պաշտոնական հանդիպումների ժամանակ շատ հաճախ սիրում էր խոսքն ավարտել Հովհաննես Ավետարանչի պատվերով. «Այս է պատուէր իմ, զի սիրեսցեք զմիմեանս, որպէս եւ ես սիրեցի զձեզ» (Յովհ. ԺԵ. 12): Այս պատվերը մեզ հաղորդելուց հետո բացատրում էր. «Դուք ապագա միաբաններ (եղբայրներ) պիտի լինեք, սպասավորները մեր Ս. Եկեղեցու եւ հավատացյալ հայ ժողովրդի: Ձեր ապագա հոգեւոր ծառայության համար անհրաժեշտ է սովորել եւ խորանալ ոչ միայն սուրբգրային, այլեւ մատենագրության, պատմական ու գեղարվեստական գրականության մեջ»:

Մ. Մինասյանը հայրական սիրով եւ ուժեղ ձեռքով տասը տարի ղեկավարեց (1945-1955) Հոգեւոր ճեմարանը շատ դաժան եւ դժվար պայմաններում՝ հասցնելով այն լիարժեք կայացման վիճակի: Այդ պայմաններում անգամ երբեք ինքն իրեն չդավաճանեց, պահեց մարդկային իր լավագույն որակը, միշտ մնաց բարեկամ դասախոսներին եւ ուսանողներին՝ բարձր պահելով Հոգեւոր ճեմարանի հեղինակությունը:

Ուսանողական եւ ճեմարանում իմ պաշտոնավարած տարիների հետ միասին, շուրջ տասը տարի, շփվել եմ Մ. Մինասյանի հետ, որպես իր օգնական եւ ճեմարանի վերակացու. այդ շրջանում ես ավելի մոտիկից ծանոթացա այդ ազնիվ ու մեղմ բնավորության

տեր անձնավորության հետ: Նա ուներ քրիստոնյային վայել մաքուր եւ ազնիվ նկարագիր: Անսահման բարի էր ու լավատես:

Մ. Մինասյանը բեղուն գործունեություն էր ծավալել նաեւ իբրեւ Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ: Այդ հեղինակավոր կառույցը կոչված էր՝ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ լուծելու ազգային-եկեղեցական այն հարցերը, որոնք ծառացած էին Մայր Աթոռի եւ Հայոց Եկեղեցու առջեւ: Մ. Մինասյանը այդ կառույցի մնայուն եւ գործուն այն անդամն էր, որն իրականում մեծ աշխատանք էր կատարում: Գործի բերումով եւ ի պահանջել հարկին ներկայացնում էր Վեհափառին եւ ստանում հանձնարարություններ: Մ. Մինասյանն էր թարգմանում Մայր Աթոռում ստացված պաշտոնական օտարալեզու նամակներն ու հեռագրերը եւ պատրաստում դրանց պատասխանները: Ստանալով Վեհափառ Հայրապետի համաձայնությունը՝ ուղարկում էր զանազան երկրներ՝ ըստ պատկանելության: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցելող օտարերկրացի բարձրաստիճան հյուրերին, հասարակական, ազգային, եկեղեցական, մշակութային գործիչներին Մ. Մինասյանն էր ներկայացնում Վեհափառ Հայրապետին՝ նախապես ապահովելով Վեհափառի համաձայնությունը:

Հակառակ իր հասարակական, վարչական եւ մանկավարժական բազմազբաղ վիճակին՝ ժամանակ առ ժամանակ զանազան հոդվածներով հանդես էր գալիս «Էջմիածին» ամսագրում:

1955 թ., երբ լրացավ Մ. Մինասյանի ծննդյան 63-ամյակը, նա անցավ կենսաթոշակի: Վաստակած հանգստի անցնելուց հետո նա ապրեց եւս քսան տարի: 1975 թ. նոյեմբերի 25-ին, Երեւանում՝ իր առանձնատանը, 83 տարեկան հասակում վախճանվեց Մինաս Մինասյանը: Այդ տխուր առիթով երջանկահիշատակ Վազգեն Ա. Հայրապետը ցավակցական հեռագիր հղեց հանգուցյալ Մինասյանի հարազատներին. «Վիշտ պատճառեց մեզ մահվան գույժը վաստակաշատ կրթական գործիչ Մինաս Մինասյանի, որ երկար տարիներ շարունակ նվիրումով ու արդյունավետությամբ վարել էր տեսչության պաշտոնը Ս. Էջմիածնի հոգեւոր ճեմարանի:

Անձամբ մենք ճանաչել ու գնահատել ենք նրան՝ իբրեւ ազնիվ կրթական մշակ ու հայրենասեր դաստիարակ: Մայր Աթոռում նրա բարի հիշատակը կպահպանվի անմոռաց:

Մեր սրտագին ցավակցություններն ենք ներկայացնում սգակիր ընտանիքի բոլոր անդամներին՝ մաղթելով նրանց արեւշատություն:

Հարգանք հանգուցյալ Մինաս Մինասյանի վաստակին եւ օրհնություն նրա արդար հոգուն:

Վազգեն Ա.

Կաթողիկոս Ամենայն Հայոց»[7]:

Երջանկահիշատակ Վազգեն Ա. Վեհափառի այս մահախոսականում ներկայացվում է գրեթե ամբողջական գնահատականը Մինասյան անհատի, որն իր ապրած ողջ գիտակցական կյանքում միայն բարիք սերմանեց իր ծանոթների, բարեկամների եւ ուսանողների սրտում: Ցիշատակ արդարոյն Օրհնութեամբ եղիցի:

7 «Էջմիածին», 1975, ԺԲ., էջ 57: